

29/04/2004  
համար 1/180Լ

«Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից իրականացվող հրապարակային մրցույթների կազմակերպման մասին» կանոնակարգը հաստատելու վերաբերյալ

Սույն կանոնակարգում ներառված է ՀՀ ԿԲ նախագահի 15.03.2005թ. թիվ 1/139Լ, 28.06.2005թ. թիվ 1/414Լ, 19.09.2005թ. 1/617Լ, 25.12.2006թ. թիվ 1/1412Լ և 22.12.2008թ. թիվ 1/1270Լ որոշումով կատարված փոփոխությունները

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ  
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՍԱՆ ՄԱՍԻՆ»  
ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ  
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը, հաշվի առնելով «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի պահանջը, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի դրույթներով,

**ո թ ո շ ու մ ե մ**

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից իրականացվող հրապարակային մրցույթների կազմակերպման մասին» կանոնակարգը համաձայն հավելված 1-ի (կցվում է):
2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի իրավաբանական վարչությանը առաջիկա Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի նիստին ներկայացնել «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 02/04/2002 թվականին հաստատված «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ֆինանսական հաշվետվության վերստուգման նպատակով աուդիտորական կազմակերպության ընտրության մասին» թիվ 86 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի որոշման նախագիծ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

**ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ**

**Ա. ԶԱՎԱԴՅԱՆ**

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ  
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՍՐՑՈՒՅԹՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ

Գլուխ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգով կարգավորվում է հրապարակային մրցույթի միջոցով աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման կամ ապրանքների ձեռք բերման նպատակով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հրապարակային մրցույթների կազմակերպման հետ կապված հարաբերությունները: Սույն կանոնակարգով չեն կարգավորվում փակ մրցույթների կազմակերպման հետ կապված հարաբերությունները:

2. Սույն Կանոնակարգում օգտագործվող հիմնական հասկացությունները ունեն հետևյալ իմաստները.

**հրապարակային մրցույթ`** հրապարակային մրցույթի կազմակերպչի կողմից բաց մրցույթի ձևով հրապարակային սակարկության անցկացման միջոցով պայմանագրերի կնքման գործընթաց, որի ընթացքում համապատասխան պայմանագիրը կնքվում է հաղթող ճանաչված այն մասնակցի հետ, որը մրցութային հանձնաժողովի եզրակացությամբ առաջարկել է հրապարակային մրցույթի լավագույն պայմաններ.

**հրապարակային մրցույթի կազմակերպիչ`** Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը.

**մրցութային հանձնաժողով`** հրապարակային մրցույթների անցկացման համար ՀՀ կենտրոնական բանկում մշտական գործող մրցութային հանձնաժողով: ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական հաշվետվության վերստուգման նպատակով արտաքին ատոլիտորական կազմակերպություն կամ կազմակերպությունների ընտրության համար անցկացվող հրապարակային մրցույթի ժամանակ մրցութային հանձնաժողով է հանդիսանում ՀՀ կենտրոնական բանկի խորհուրդը.

**հրապարակային մրցույթի մասնակիցներ`** սույն կանոնակարգով սահմանված կարգով նախավճար վճարած և հրապարակային մրցույթի միջոցով համապատասխան պայմանագիր կնքելու ցանկություն հայտնած անձինք: Հրապարակային մրցույթի մասնակիցներ կարող են լինել Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք ու իրավաբանական անձ հանդիսացող ցանկացած կազմակերպություններ: Հրապարակային մրցույթին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք`

- 1) որոնք անվճարունակ են, լուծարման գործընթացում սնանկ են ճանաչվել.
- 2) որոնք մրցույթի հայտը ներկայացնելու պահին ունեն Հայաստանի Հանրապետության պետական բյուջեյի նկատմամբ ժամկետանց պարտքեր` հարկային և օրենքով սահմանված այլ պարտադիր վճարումների գծով.

**հրապարակային մրցույթի պայմաններ՝** ՀՀ կենտրոնական բանկի կողմից իրականացվող հրապարակային մրցույթով կնքվող պայմանագրի էական պայմանների համալիր.

**լուտ՝** աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման, ապրանքների ձեռք բերման և այլ քաղաքացիաիրավական պայմանագրերի կնքման իրավունք, որոնց արժեքը գերազանցում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ նախատեսված գումարի չափը.

**մրցույթի արդյունքների մասին արձանագրություն՝** մրցույթի արդյունքների հիման վրա ՀՀ կենտրոնական բանկի և մրցույթում հաղթող ճանաչված մասնակցի միջև ստորագրված փաստաթուղթ, որի ստորագրման պահից մրցույթում հաղթող ճանաչված մասնակիցը ձեռք է բերում/ստանձնում համապատասխան պայմանագիր կնքելու իրավունք/ պարտավորություն.

**մրցութային հանձնաժողովի հատուկ նիստ՝** մրցույթի անցկացման մասին հրապարակային ծանուցմամբ նախատեսված մրցույթի հայտերի բացման օրվա և ժամին մրցութային հանձնաժողովի գումարած նիստ.

**մրցույթի հայտերի ամփոփման նիստ՝** մրցույթի հաղթողին որոշելու համար գումարվող մրցութային հանձնաժողովի նիստ, որի ընթացքում Մրցութային հանձնաժողովը քվեարկության միջոցով ձևավորված եզրակացության հիման վրա որոշում է կայացնում ստորագրել մրցույթի արդյունքների մասին արձանագրությունը կամ որոշում է կայացնում մրցույթը չկայացած համարելու մասին: Մրցույթի հաղթողին որոշելու համար գումարվող մրցութային հանձնաժողովի նիստը պետք է կայանա մրցույթի հայտերը ներկայացնելու վերջին օրվանից առավելագույնը երեսուն աշխատանքային օրվա ընթացքում.

**ծածկագիր՝** հրապարակային ծանուցմամբ նախատեսվող հրապարակային մրցույթով կնքվելիք պայմանագրի առարկայի անվանումը (առարկան) փոխարինող տերմին, բառեր, բառակապակցություն և այլն.

**ծածկանուն՝** հրապարակային մրցույթի մասնակցի անվանումը փոխարինող թվանշան, տերմին, բառեր, բառակապակցություն և այլն.

## Գլուխ 2. ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

3. Հրապարակային մրցույթում մասնակցելու մասին ՀՀ կենտրոնական բանկի հրապարակված առաջարկը (հայտարարությունը) ուղղված է բոլոր ցանկացողներին: Հրապարակային մրցույթը կարող է պայմանավորված լինել դրա մասնակիցների որակավորմամբ (պայմանագիրը կատարելու համար անհրաժեշտ մասնագիտական, տեխնիկական, ֆինանսական միջոցների, նյութական և աշխատանքային ռեսուրսների, լիցենզիայի առկայությամբ): Նշված դեպքում մասնակիցներին ներկայացվող պահանջները նշվում են հրապարակային ծանուցմամբ:

4. Հրապարակային մրցույթի մասնակիցները և նրանց ներկայացուցիչները կարող են մրցութային հայտն ընդունելու մասին ՀՀ կենտրոնական բանկի աշխատակազմի փաստաթղթերի շրջանառության բաժնի կողմից ստորագրված և կնքված համապատասխան տեղեկանքի հիման վրա ներկա գտնվել մրցույթի հայտերի բացման, ինչպես նաև մրցույթի հայտերի ամփոփման նիստերին, նրանք կարող են ծանոթանալ մրցույթի նիստերի արձանագրություններին և պատճենահանել դրանք: Մրցույթի հայտերի բացման ինչպես նաև մրցույթի հայտերի ամփոփման նիստերին մրցութային հանձնաժողովի կողմից մրցույթի հետ կապված առանձին հարցեր քննարկելու

նպատակով, ներկա գտնվող հրապարակային մրցույթի մասնակիցները կամ նրանց ներկայացուցիչները, նիստը նախագահողի պահանջով, կարող են որոշակի ժամանակով դուրս հրավիրվել նիստերի դահլիճից, ընդ որում ներկա գտնվող մրցույթի մասնակիցները մրցույթի հայտերի բացման ինչպես նաև մրցույթի հայտերի անփոփման նիստերի ընթացքում, առանց նախագահողի թույլտվության չեն կարող հարցեր տալ, առաջարկություններ և դիտողություններ անել և այլն:

Հրապարակային մրցույթին մասնակցելու համար ցանկություն հայտնաձև օտարերկրյա մասնակիցները կարող են սույն կանոնակարգով նախատեսված անհրաժեշտ փաստաթղթերը և տեղեկությունները ներկայացնել ռուսերեն կամ անգլերեն լեզուներով:

5. Հրապարակային մրցույթի միջոցով համապատասխան պայմանագիր կնքելու ցանկություն հայտնաձև անձանց ցանկությամբ նրանց անվճար տրամադրվում է սույն կանոնակարգի պատճեն:

6. Հրապարակային մրցույթի մասնակիցները հրապարակային ծանուցմամբ նախատեսված կարգով, չափով և ժամկետներում մուծում են նախավճար:

7. Մրցութային հանձնաժողովը մինչև մրցույթի հաղթողին ճանաչելու օրը անհրաժեշտության դեպքում կարող է պահանջել հրապարակային մրցույթի մասնակիցներից ներկայացնել լրացուցիչ տեղեկություններ, փաստաթղթեր, ինչպես նաև ձեռք բերվող գույքի, կատարվող աշխատանքների կամ մատուցվող ծառայությունների նմուշները՝ դրանց որակը տեղում ստուգելու նպատակով: Նշված դրույթը պարտադիր չէ և հրապարակային ծանուցման մեջ:

8. Հրապարակային մրցույթին մասնակցելու համար ցանկություն հայտնաձև մասնակիցները մինչև հայտերի բացման օրը կարող են հետ վերցնել մրցույթի հայտերը (հրաժարվել մրցույթին մասնակցելուց):

### Գ.ԼՈՒԽ 3.ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԻՋՈՑՈՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐ ԿՆՔԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ.

9. Հրապարակային մրցույթում հաղթողի հետ սույն կանոնակարգով նախատեսված մրցույթի արդյունքների մասին արձանագրությունը ստորագրելու պահից նրան է անցնում համապատասխան պայմանագիր կնքելու իրավունքը:

10. Հրապարակային մրցույթում հաղթողի հետ համապատասխան պայմանագիր կնքելիս պայմանագրի էական պայմանները պետք է համապատասխանեն հրապարակային մրցույթի մասին հրապարակային ծանուցմամբ սահմանված պայմաններին և հայտերի քննարկման ժամանակ հարցումների և դրանց պատասխանների հիման վրա հրապարակային մրցույթում հաղթողի հետ ձեռք բերված համաձայնություններին:

10.1 Մրցութային հանձնաժողովի կողմից հաստատված պայմանների հետագա ցանկացած փոփոխություն պարտադիր պետք է ներկայացվի մրցութային հանձնաժողովի հաստատմանը:

### Գլուխ 4. ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՅՄԱՆ ՄԱՍԻՆ ԾԱՆՈՒՅՈՒՄԸ

11. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մամուլի քարտուղարը հրապարակային մրցույթի անցկացման մասին հայտարարությունը (այսուհետ՝ Հրապարակային ծանուցումը) հրապարակում է նվազագույնը 1000 (հազար) տպաքանակ ունեցող մեկ կամ ավելի թերթերում, ընդ որում թերթերի քանակը որոշվում է մրցութային

հանձնաժողովի կողմից, ՀՀ կենտրոնական բանկի ինտերնետային տնային էջում և էլեկտրոնային այլ միջոցներով հրապարակային մրցույթը սկսվելուց (մրցույթի հայտերի ընդունման վերջին օրից) առնվազն 30 (երեսուն) օր առաջ:

12. Հրապարակային ծանուցումը պետք է պարունակի հետևյալ տեղեկություններ՝

- ա) Հրապարակային մրցույթի կազմակերպչի անվանումը (անվանումը).
- բ) Հրապարակային մրցույթի կազմակերպման վայրը (հասցեն).
- գ) Հրապարակային մրցույթի լուսի նկարագրությունը, մրցույթի պայմանները (կնքվելիք պայմանագիրը).
- դ) Հրապարակային մրցույթի հայտերի ընդունման ժամանակահատվածը՝ նշելով ժամերն ըստ օրերի.
- ե) Հրապարակային մրցույթի ձևը և անցկացնելու կարգը (մրցութային հայտերին ներկայացվող պահանջները, դրանց ներկայացման կարգը, մրցութային հայտերը բացելու, ինչպես նաև մրցույթի հայտերն ամփոփելու կարգը).
- զ) Հրապարակային մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի և տեղեկությունների ցանկը.
- թ) Հրապարակային մրցույթում հաղթողին որոշելու կարգը.
- է) Հրապարակային մրցույթին մասնակցելու նախավճարի չափը, ինչպես նաև վճարելու կարգը և ժամկետները.
- ը) Հրապարակային մրցույթի ծածկագիրը և դրա կիրառման կարգը.
- ի) Հրապարակային մրցույթի հայտերը բացելու, ինչպես նաև մրցույթի հայտերն ամփոփելու նիստերի օրը և ժամը.
- յ) համապատասխան պայմանագրի կնքման համար տրամադրվող ժամկետը.
- իւ) Հրապարակային մրցույթի կանոնակարգին ծանոթանալու վայրը և կանոնակարգի պատճենը տրամադրելու կարգը.
- ծ) սույն կանոնակարգով նախատեսված այլ տեղեկություններ (սույն կանոնակարգի 7-րդ, 18 –րդ և 56-րդ կետեր).
- կ) մրցութային հանձնաժողովի հայեցողությամբ այլ տեղեկություններ.

12<sup>1</sup> Հրապարակային ծանուցումը պարունակում է նաև հետևյալ տեղեկությունները.

- ա) Հրապարակային մրցույթի առարկայի գինը և վերջինիս հաշվարկման մեթոդը:
- բ) Ձեռքբերումների այն ժամանակահատվածը, որի համար հայտարարվել է մրցույթը:

13. Եթե հրապարակային ծանուցմամբ նախատեսված հրապարակային մրցույթով կնքվող պայմանագիրը պարունակում է հրապարակման ոչ ենթակա տեղեկություններ, ապա մրցույթի կազմակերպիչը կնքվելիք պայմանագրի վերաբերյալ հրապարակման ոչ ենթակա տեղեկությունները տրամադրում է հրապարակային մրցույթին մասնակցելու ցանկություն հայտնած անձանց մրցույթի անցկացման վայրում: Կնքվելիք պայմանագրի վերաբերյալ հրապարակման ոչ ենթակա տեղեկությունները տրամադրվում են նշված անձանց, եթե նշված անձինք ստանձնում են պարտավորություն հրապարակման ոչ ենթակա տեղեկությունները, առանց ՀՀ կենտրոնական բանկի համաձայնությամբ երրորդ անձանց չտրամադրելու վերաբերյալ.

14. Հրապարակային ծանուցմամբ, որպես Հրապարակային մրցույթում հաղթողին որոշելու կարգ, սահմանվում է, որ մրցույթում հաղթող է ճանաչվում այն մասնակիցը, որը մրցութային հանձնաժողովի եզրակացությամբ ներկայացրել է հրապարակային մրցույթի

լավագույն պայմաններ: Առանձին դեպքերում հրապարակային մրցույթի ծանուցմամբ կարող է նկարագրվել հրապարակային մրցույթում հաղթողին որոշելու հատուկ արարողակարգ:

15. Հրապարակային մրցույթի առարկան՝ համապատասխան պայմանագիրը ՀՀ կենտրոնական բանկը և մրցույթում հաղթող ճանաչված մասնակիցը պետք է ստորագրեն հրապարակային մրցույթի ավարտից և արձանագրության ձևակերպումից հետո քսան օրվա ընթացքում, եթե հրապարակային ծանուցման մեջ կամ կողմերի համաձայնությամբ այլ ժամկետ չի սահմանվի:

16. Մրցութային հանձնաժողովը հրապարակային մրցույթի հայտերի բացման օրը մրցույթի մասնակիցների ներկայացրած հայտերի ուսումնասիրությունից հետո կարող է փոփոխել հրապարակային ծանուցմամբ նախատեսված հրապարակային մրցույթի հայտերի ամփոփման օրը և ժամը, դրա մասին ծանուցելով մասնակիցներին:

#### Գլուխ 5. ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՅՍԱՄԲ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ և ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ

17. Հրապարակային մրցույթի պայմաններում, ինչպես նաև հրապարակային մրցույթի հայտերը բացելու օրվա և ժամի վերաբերյալ փոփոխություններ կատարելու անհրաժեշտության դեպքում ՀՀ կենտրոնական բանկը պարտավոր է մրցույթի մասին հրապարակային ծանուցման մեջ անհապաղ կատարել համապատասխան փոփոխություններ և (կամ) լրացումներ (այսուհետ՝ հրապարակային ծանուցման փոփոխություն): Սույն կետում նշված հրապարակային ծանուցման փոփոխությունները կատարվում են այն ձևով, ինչպես կատարվել էր մրցույթի մասին հրապարակային ծանուցումը:

18. Հրապարակային ծանուցման փոփոխությունները կարող են կատարվել մինչև մրցույթի հաղթողին որոշելու օրը: Հրապարակային ծանուցման մեջ փոփոխություններ կատարելու դեպքում մասնակիցները իրավունք ունեն սույն կանոնակարգով սահմանված կարգով մրցութային հայտերում կատարել լրացուցիչ փոփոխություններ: ՀՀ կենտրոնական բանկը հրապարակային ծանուցման փոփոխության դեպքում չի կրում մասնակիցների կողմից կրած իրական վնասների ռիսկը: Սույն դրույթը պարտադիր նշվում է հրապարակային ծանուցման մեջ:

19. Հրապարակային ծանուցման փոփոխությամբ թույլատրվում է կատարել ցանկացած լրացում, եթե դրանով չեն փոփոխվում մրցույթի պայմանների մասին հրապարակային ծանուցման մեջ նշված էական պայմանները:

#### Գլուխ 6. ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

20. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հրապարակային մրցույթների կազմակերպման և անցկացման նպատակով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում ստեղծվում է 7 (յոթ) անդամից բաղկացած հրապարակային մրցույթների կազմակերպման և անցկացման մշտական գործող հանձնաժողով (այսուհետ՝ Մրցութային հանձնաժողով): Ընդ որում ՀՀ կենտրոնական բանկի գործերի կառավարչության պլանավորման և վերլուծությունների բաժնի պետն ի պաշտոնե հանդիսանում է Մրցութային հանձնաժողովի քարտուղար և պատասխանատու է ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակային մրցույթների կազմակերպման և անցկացման համար: ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական հաշվետվության

վերստուգման նպատակով արտաքին աուդիտորական կազմակերպություն կամ կազմակերպությունների ընտրության համար անցկացվող հրապարակային մրցույթի ժամանակ մրցութային հանձնաժողով է հանդիսանում ՀՀ կենտրոնական բանկի խորհուրդը:

21. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում ստեղծվող հրապարակային մրցույթների կազմակերպման և անցկացման մշտական գործող հանձնաժողովի կազմում՝ խորհրդակցական ձայնի իրավունքով, որպես մասնագետներ Մրցութային հանձնաժողովի որոշմամբ կարող են ներգրավվել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի համապատասխան ստորաբաժանումների աշխատակիցները, ինչպես նաև նշանակվում է Հանձնաժողովի նիստերի արձանագրողին:

22. Մրցութային հանձնաժողովը հաստատում է մրցույթի մասին հրապարակային ծանուցման տեքստը, բացում և գնահատում է մրցույթի հայտերը, ինչպես նաև որոշում է մրցույթի հաղթողին, իրականացնում է օրենքով և սույն կանոնակարգով նախատեսված այլ գործողություններ:

23. Մրցութային հանձնաժողովը պատասխանատու է հրապարակային մրցույթի անցկացման ընթացքում մրցույթի անցկացման օրինականության ապահովման, հրապարակային մրցույթի կազմակերպման, ինչպես նաև նիստերի արձանագրությունների և այլ փաստաթղթերի պահպանման համար:

24. Մրցութային հանձնաժողովի նիստերին, դրանց ամբողջ ընթացքում մասնակցում են հանձնաժողովի անդամները: Հանձնաժողովի նիստերին, առանձին հարցերի քննարկումների ժամանակ, խորհրդակցական ձայնի իրավունքով, որպես հրավիրված անձ (անձինք) կարող են մասնակցել ՀՀ Ազգային Ժողովի վերահսկիչ պալատի, ՀՀ Նախագահի աշխատակազմի, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության և այլ մարմինների ներկայացուցիչներ և այլ անձինք:

25. Մրցութային հանձնաժողովի նիստն իրավագոր է, եթե նիստին ներկա են մրցութային հանձնաժողովի անդամների 2/3-ը:

26. Մրցութային հանձնաժողովի որոշումները ընդունվում են բաց քվեարկության արդյունքներով: Մրցութային հանձնաժողովի որոշումները ընդունվում են մրցութային հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, ձայների հավասարության դեպքում մրցութային հանձնաժողովի նախագահողի ձայնը որոշիչ է:

27. Մրցութային հանձնաժողովը հրապարակային մրցույթի մասնակցի կողմից կնքվելիք պայմանագրով նախատեսված աշխատանքների կամ ծառայությունների կատարման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների առկայության և վիճակի մասին ներկայացված տեղեկատվությունը ստուգելու նպատակով կարող է գումարել արտագնա նիստ:

#### Գլուխ 7. ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ և ԴՐԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

28. Հրապարակային մրցույթին մասնակցել ցանկացող անձինք, մրցույթի մասին հրապարակային ծանուցման պահանջներին համապատասխան, առձեռն կամ փոստային ծառայության միջոցով ՀՀ կենտրոնական բանկ են ներկայացնում մրցույթի հայտեր:

29. Հրապարակային մրցույթի հայտով ներկայացվող տեղեկությունները և փաստաթղթերը ներկայացվում են երկու փակ և ստանձված ծրարներում:

30. Մրցույթի հայտի առաջին ծրարի վրա կատարվում են հետևյալ գրառումները.

1. մրցույթի մասին հրապարակային ծանուցման մեջ նշված մրցույթի հայտի ներկայացման վայրը (հասցեն)։
2. մրցույթի ծածկագիրը (և/կամ մրցույթի անվանումը)։
3. «մրցույթի պայմաններ» բառերը։
4. «չբացել մինչև մրցույթի հայտերի բացման նիստը» բառերը։
5. մասնակցի անվանումը, գտնվելու վայրը և հեռախոսահամարը (մասնակցի ցանկությամբ ՀՀ կենտրոնական բանկի աշխատակազմի փաստաթղթերի շրջանառության բաժնի կողմից նշվում է նաև մասնակցի ծածկանունը)։

31. Մրցույթի հայտի առաջին ծրարով ներկայացվում են հրապարակային մրցույթի մասնակցի կողմից առաջարկվող մրցույթի պայմանները (կնքվելիք պայմանագրի էական պայմանների առաջարկը՝ այդ թվում հրապարակային մրցույթի առարկայի գինը և վերջինիս հաշվարկման մեթոդը, ինչպես նաև այլ անհրաժեշտ տեղեկություններ)։

32. Մրցույթի հայտի երկրորդ ծրարի վրա կատարվում են հետևյալ գրառումները։

1. մրցույթի մասին հրապարակային ծանուցման մեջ նշված մրցույթի հայտի ներկայացման վայրը (հասցեն)։
  2. մրցույթի ծածկագիրը (կամ մրցույթի անվանումը)։
  3. «չբացել մինչև մրցույթի հայտերի բացման նիստը» բառերը։
  4. մասնակցի անվանումը, գտնվելու վայրը և հեռախոսահամարը (մասնակցի ցանկությամբ ՀՀ կենտրոնական բանկի աշխատակազմի փաստաթղթերի շրջանառության բաժնի կողմից նշվում է նաև մասնակցի ծածկանունը)։
33. Մրցույթի հայտի երկրորդ ծրարով ներկայացվում են հրապարակային ծանուցմամբ պահանջվող բոլոր այլ տեղեկությունները և փաստաթղթերը։

34. Մրցույթի հայտերը ՀՀ կենտրոնական բանկի աշխատակազմի փաստաթղթերի շրջանառության բաժնի կողմից գրանցվում են առանձին գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարների վրա նշելով գրանցման համարը, տարին, ամիսը, ամսաթիվը և ժամը, մասնակցի անվանումը (մասնակցի ցանկությամբ ծածկանունը), մրցույթի հայտի փոփոխության կամ հայտերի հետ վերցման մասին։ Նշված գրանցամատյանի հիման վրա կազմվում է ամփոփ տեղեկանք, որը մրցութային հանձնաժողովի հատուկ նիստում ներկայացվում է մրցութային հանձնաժողովին։ Մասնակցին տրամադրվում է ՀՀ կենտրոնական բանկի աշխատակազմի փաստաթղթերի շրջանառության բաժնի կողմից ստորագրված և կնքված համապատասխան տեղեկանք՝ մրցույթի հայտն ընդունելու մասին, որում նշվում է՝ մասնակցի անվանումը (մասնակցի ցանկությամբ ծածկանունը), հայտի ընդունման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը, հայտի ընդունողի աշխատակցու անունը, ազգանունը և պաշտոնը։

35. Հրապարակային մրցույթի մասնակիցների մրցութային հայտերը մինչև մրցութային հանձնաժողովի հատուկ նիստը պահպանվում են ՀՀ կենտրոնական բանկի աշխատակազմի փաստաթղթերի շրջանառության բաժնում, որը պատասխանատու է դրանց պահպանության համար։ Մրցութային հանձնաժողովի հատուկ նիստում դրանք հանձնվում են մրցութային հանձնաժողովի նախագահին։

**Գլուխ 8. ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻՆ ՄԱՍՆԱԿՅԵԼՈՒ ՀԱՍԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ և ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ.**

36. Հրապարակային մրցույթի մասնակիցների կողմից հրապարակային մրցույթին մասնակցելու հայտով ներկայացվող տեղեկությունները և փաստաթղթերի ցանկը սահմանվում է հրապարակային մրցույթի մասին հրապարակային ծանուցմամբ։



37. Հրապարակային մրցույթի մասնակիցների կողմից հրապարակային մրցույթին մասնակցելու հայտի առաջին ծրարով ներկայացվում են միայն մրցույթի պայմանները (հրապարակային մրցույթով կնքվելիք պայմանագրի էական պայմանների առաջարկը)՝ պահպանելով սույն կանոնակարգի 30-րդ և 31-րդ կետերի պահանջները.

Հրապարակային մրցույթի մասնակիցների կողմից հրապարակային մրցույթին մասնակցելու հայտի երկրորդ ծրարում պետք է ներկայացվեն հետևյալ տեղեկությունները և փաստաթղթերը.

1. մրցույթի մասնակցի տվյալները՝ այդ թվում՝ անվանումը, գտնվելու վայր (հասցեն), հեռախոսահամար, իրավաբանական անձի դեպքում՝ ձեռնարկությունների պետական ռեգիստրի կողմից տրված վկայականի պատճեն.

2. տեղեկություններ նախկինում նման ոլորտում այլ կազմակերպությունների հետ (հայաստանյան, միջազգային, օտարերկրյա) համագործակցելու մասին.

3. լիցենզիայի ռեկվիզիտները (դրա առկայության անհրաժեշտության դեպքում).

4. տեղեկանքներ ՀՀ կառավարության առընթեր հարկային պետական ծառայությունից և կենսաթոշակային հիմնադրամից՝ գործունեության վերջին ժամանակահատվածում և տվյալ պահին կազմակերպության՝ պետբյուջեի նկատմամբ ունեցած պարտավորությունների վերաբերյալ (դրա անհրաժեշտության դեպքում).

5. համապատասխան աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների առկայության և վիճակի մասին տեղեկատվություն.

6. Հրապարակային մրցույթին մասնակցելու նախավճարի վճարված լինելը հավաստիացնող փաստաթուղթ:

7. այլ անհրաժեշտ տվյալներ և փաստաթղթեր մրցույթի կազմակերպչի հայեցողությամբ.

38. Սույն կանոնակարգի պահանջներին չհամապատասխանող մրցույթի հայտերը՝ ծրարներին, մրցույթի հայտերի ներկայացման ժամկետներին, ինչպես նաև մրցույթի հայտերով ներկայացման ենթակա տեղեկություններին և փաստաթղթերին ներկայացվող պահանջներին չհամապատասխանող հայտերը մրցութային հանձնաժողովի կողմից մերժվում են և վերադարձվում են ներկայացնողին:

39. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը պատասխանատու չէ մրցույթի մասնակիցների այն ծախսերի համար, որոնք պայմանավորված են մրցույթի նախապատրաստման և ուղարկման համար՝ անկախ մրցույթի արդյունքներից:

40. Մրցույթի մասնակիցները մինչև մրցույթի հայտերը ներկայացնելու վերջնական ժամկետի ավարտը, կարող են փոփոխել կամ հետ վերցնել հայտերը: Մրցույթի հայտի փոփոխությունը կատարվում է սույն կանոնակարգով մրցույթի հայտ ներկայացնելու համար նախատեսված կարգով՝ համապատասխան ծրարի վրա ավելացնելով «փոփոխում» բառը:

41. Մրցույթին մասնակցել ցանկացողները կարող են մրցույթի հայտերը ՀՀ կենտրոնական բանկ ուղարկել պատվիրված նամակով: Մասնակիցները նույն կարգով կարող են հետ վերցնել մրցույթի հայտերը: Նշված դեպքում մրցութային հայտն ընդունելու մասին ՀՀ կենտրոնական բանկի աշխատակազմի փաստաթղթերի շրջանառության բաժնի կողմից ստորագրված և կնքված համապատասխան տեղեկանքը մրցույթի մասնակցին ուղարկվում է նամակով:

Գլուխ 9. ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՈՒՄԸ և ԱՐԳՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ

42. Հրապարակային մրցույթի մասնակիցների կողմից ներկայացված հայտերը բացվում են մրցույթի մասին հրապարակային ծանուցմամբ նախատեսված օրը և ժամին, մրցութային հանձնաժողովի հատուկ նիստում: ՀՀ կենտրոնական բանկի իրավաբանական վարչության պետը պարտադիր ստորագրում է հրապարակային մրցույթի միայն գնային առաջարկ պարունակող փաստաթուղթը(երը)

43. Մրցույթի հայտերի բացման նիստում հրապարակվում են՝

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի աշխատակազմի փաստաթղթերի շրջանառության բաժնի կողմից ներկայացված ամփոփ տեղեկանքը.
2. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հաշվապահական հաշվառման վարչության կողմից պատրաստված տեղեկանքը մասնակիցների կողմից վճարված նախավճարների վերաբերյալ:
3. մրցույթի հայտը ներկայացրած յուրաքանչյուր անձի անվանումը կամ ծածկանունը մասնակցի ցանկությամբ: Սույն ենթակետով նախատեսված մասնակցի ծածկանունը, որոշում է ՀՀ կենտրոնական բանկի աշխատակազմի փաստաթղթերի շրջանառության բաժնի կողմից, որպես ծածկանուն կարող է օգտագործվել մրցույթի հայտի ծրարի վրա նշված՝ ըստ ստացման հերթականության գրանցման համարը.
4. մրցույթի հայտեր ներկայացնելու ժամկետների և հայտերի ծրարների վրա կատարված գրառումների համապատասխանությունը սույն կանոնակարգի և մրցույթի մասին հրապարակային ծանուցման պահանջներին.

44. Մրցույթի հայտերը բացելուց հետո մրցութային հանձնաժողովի որոշմամբ ՀՀ կենտրոնական բանկի համապատասխան ստորաբաժանումների կողմից մրցույթի հայտերում նշված տեղեկության հիման վրա պատրաստվում է համապատասխան տեղեկանք, որում նշվում է մրցույթի յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած հրապարակային մրցույթի պայմանները (կնքվելիք պայմանագրի էական պայմանները) և այլ անհրաժեշտ տեղեկություններ:

44.1 Մրցույթի առաջարկների ամփոփման գործընթացը պետք է իրականացվի Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի համապատասխան ստորաբաժանման նվազագույնը երկու աշխատակիցների կողմից (կատարում- ստուգում սկզբունքով), որոնք պետք է ստորագրեն մրցութային հանձնաժողովին ներկայացվող համեմատական աղյուսակի տակ կամ ամփոփ տեղեկանքի վրա: Ընդ որում, եթե մրցույթի առաջարկների ամփոփման գործընթացում ներգրավված են լինում 1-ից ավելին ստորաբաժանումներ, ապա յուրաքանչյուր ստորաբաժանման երկու աշխատակիցները նույնպես ստորագրում են դրա տակ:

44.2 Մրցութային հանձնաժողովի նիստի օրակարգ մտցնելու համար հարցերը ներկայացվում են Մրցութային հանձնաժողովի քարտուղարի կողմից:

Մրցույթի առաջարկների ամփոփման գործընթացը իրականացնող աշխատանքային խմբի ղեկավարն է նախաձեռնող ստորաբաժանման ղեկավարը: Աշխատանքային խմբի ղեկավարը կազմակերպում է աշխատանքային խմբի աշխատանքները, հաստատում է աշխատանքային խմբի կողմից կազմված ամփոփ տեղեկանքը, ինչպես նաև մրցույթի ամփոփման նիստին Մրցութային հանձնաժողովին է ներկայացնում մրցույթի ամփոփման համար անհրաժեշտ տեղեկությունները (այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի էական պայմանները): Աշխատանքային խմբի ղեկավարի բացակայության դեպքում նրա պարտականությունները կատարում է նրա, որպես ստորաբաժանման ղեկավարի, տեղակալը կամ փոխարինողը:

45. Մրցութային հանձնաժողովը սույն կանոնակարգի 44 –րդ կետում նշված տեղեկանքի հիման վրա ընտրում է առաջարկած մրցութային պայմաններից լավագույն մրցութային պայմանները: Նշված՝ լավագույն մրցութային պայմանները պարունակող հայտերի քննարկման ժամանակ հարցումների և դրանց պատասխանների հիման վրա մրցութի ամփոփման օրը որոշվում է մրցութում հաղթողի անունը (անվանումը):

46. Մրցութի հայտերն ամփոփելու օրը մրցութային հանձնաժողովը կազմում է մրցութի արդյունքների մասին արձանագրություն, որտեղ նշվում է՝

1. մրցութի հայտերի բացման, ինչպես նաև մրցութի հայտերի ամփոփման վայրը, ամսաթիվը և ժամը, ինչպես նաև մրցութային հանձնաժողովի անդամների, նիստին մասնակցող հրավիրված անձանց և մասնագետների անունները, ազգանունները և պաշտոնները.

2. մրցութի մասնակիցների անունները (անվանումները) և գտնվելու (բնակության) վայրը կամ մասնակցի ցածկանունը (եթե այդպիսին կիրառվել է).

3. տեղեկություններ՝ մրցութի հայտերի վերաբերյալ հարցումների և դրանց պատասխանների մասին.

4. մրցութում հաղթողի (հաղթողների) անունը.

5. այլ անհրաժեշտ տեղեկություններ:

46<sup>1</sup> Մրցութի արդյունքների մասին արձանագրության մեջ նշվում են նաև այն նախապատվելիության չափանիշները, որոնց հիման վրա մրցութի մասնակիցներից մեկը հաղթող է ճանաչվել: Մրցութի արդյունքների մասին արձանագրությանը Կենտրոնական բանկի աշխատակազմի արձանագրային բաժնի կողմից կցվում են մրցութային հանձնաժողովի կողմից հաստատված մրցութի մասին ծանուցման տեքստը, մասնակիցների կողմից ներկայացված պայմանների վերաբերյալ տեղեկանքը (համեմատական աղյուսակները և այլ տեղեկությունները):

47. Մրցութային հանձնաժողովի անդամի հատուկ կարծիքը ներկայացվում է գրավոր, որը կցվում է արձանագրությանը և համարվում է դրա անբաժանելի մասը:

48. Մրցութի արդյունքներն ամփոփելու և մրցութում հաղթողին ճանաչելու օրը կամ հաջորդ երեք աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ կենտրոնական բանկը ի դեմս մրցութային հանձնաժողովի և մրցութի հաղթող ճանաչված մասնակիցը (մասնակիցները) ստորագրում են մրցութի արդյունքների մասին արձանագրությունը, որը ունի պայմանագրի ուժ: Սույն կետով նախատեսված արձանագրությունը կարող է ստորագրվել հեռատիպային (fax) կապի միջոցներով փաստաթղթեր (պայմանագրերը) փոխանակելու միջոցով և ուժի մեջ է մտնում ստորագրման պահից: Կնքված և ստորագրված արձանագրության բնօրինակները փոխանակվում են փոստային կապի միջոցներով:

49. Հրապարակային մրցութում հաղթող կարող են ճանաչվել երկու և ավելին մասնակիցներ: Նշված դեպքում դրանց միջև հետագայում կարող են կնքվել կոնկրետ աշխատանքներ կատարելու համար համապատասխան պայմանագրեր:

Գլուխ 10. ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻՆ ՍԱՄՆԱԿՑԵԼՈՒ ՆԱԽԱՎՃԱՐԻ ՉԱՓԸ, ՎՃԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ և ԺԱՄԿԵՏՆԵՐԸ.

50. Հրապարակային մրցութի մասնակիցները մրցութի մասին հրապարակային ծանուցման մեջ նշված չափով, ժամկետներում և կարգով մուծում են նախավճար, ընդ որում, հրապարակային մրցութին մասնակցելու համար ցանկություն հայտնած օտարերկրյա մասնակիցները կարող են հրապարակային ծանուցմամբ նշված նախավճարը մուծել արտարժույթով:

51. Եթե հրապարակային մրցույթը չի կայացվում, նախավճարը վերադարձվում է: Նախավճարը վերադարձվում է նաև մրցույթում չհաղթած մասնակիցներին: Սույն կետում նշված նախավճարը վերադարձվում է մրցույթի արդյունքների մասին արձանագրությունը ստորագրելու պահից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

52. Մրցույթի հաղթող ճանաչված մասնակցի կողմից համապատասխան պայմանագրի ստորագրելու պահից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում նրան վերադարձվում է մուծած նախավճարի գումարը:

53. Մրցույթում հաղթած անձն սույն կանոնակարգի 15-րդ կետում նշված պայմանագիրը կամ 48-րդ կետում նշված արձանագրությունը ստորագրելուց խուսափելու դեպքում կորցնում է մուծած նախավճարը:

54. Սույն կանոնակարգի 15-րդ կետում նշված պայմանագիրը ստորագրելուց հրաժարվող հրապարակային մրցույթի կազմակերպիչը պարտավոր է նախավճարը վերադարձնել կրկնակի չափով, ինչպես նաև մրցույթում հաղթած անձին հատուցել մրցույթին մասնակցելու հետևանքով կրած իրական ծախսերը:

#### Գլուխ 11. ՉԿԱՅԱՑԱԾ և ԱՆՎԱՎԵՐ ՄՐՑՈՒՅԹՆԵՐ

55. Մրցույթային հանձնաժողովը չկայացած (անվավեր) է համարում մրցույթը, եթե՝

1. ոչ մի հայտ չի ներկայացվել.

2. ներկայացված հայտերից ոչ մեկը չի համապատասխանում մրցույթի մասին հրապարակային ծանուցման մեջ նշված պահանջներին.

3. արտակարգ իրավիճակների պատճառով անհնար է դառնում մրցույթով նախատեսված աշխատանքների կատարումը, գույքի ձեռք բերումը կամ ծառայությունների մատուցումը:

56. Հրապարակային մրցույթի հանձնաժողովը մինչև մրցույթի հաղթողին որոշելու օրը (հայտերի ամփոփման օրը) իրավունք ունի հրաժարվել մրցույթ անցկացնելուց: ՀՀ կենտրոնական բանկը մրցույթ անցկացնելուց հրաժարվելու դեպքում չի կրում մասնակիցների կողմից կրած իրական վնասների ռիսկը: Նշված դրույթը պարտադիր նշվում է հրապարակային ծանուցման մեջ:

#### Գլուխ 12. ՍԱԿԱՐԿՎՈՂ ՄՐՑՈՒՅԹՆԵՐ

57. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը կարող է անցկացնել նաև սակարկվող մրցույթներ, այն է՝ մասնակիցներին առաջարկել իրեն վաճառելու միևնույն հատկանիշներով օժտված լոտեր: Սակարկություններում հաղթողին որոշելու համար նշանակություն ունի միայն մասնակիցների կողմից վաճառվող կամ առաջարկվող լոտերի գնային պայմանները:

58. Սակարկվող մրցույթները կազմակերպվում և անցկացվում են սույն կանոնակարգի դրույթներին համապատասխան:

59. Սակարկվող մրցույթի մասնակիցները սակարկվող մրցույթի մասին հրապարակային ծանուցմամբ նախատեսված տեղում, օրը և ժամին ներկայացնում են առաջարկություններ իրենց կողմից վաճառվող լոտերի գնի վերաբերյալ: Առավել ցածր գին առաջարկած մասնակիցը ճանաչվում է մրցույթի հաղթող:

60. Եթե մի քանի մասնակիցների կողմից կատարվում են միևնույն չափով գնի առաջարկ, ապա հաղթողը որոշվում է վիճակահանությամբ:

Գլուխ 13. ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐՍՏՈՒԳՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՌԻԳԻՏՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՄՐՅՈՒՅԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ և ԱՆՑԿԱՅՈՒՄԸ

61. ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական հաշվետվության վերստուգման նպատակով աուդիտորական կազմակերպության ընտրության համար հրապարակային մրցույթները կազմակերպվում և անցկացվում են սույն կանոնակարգի դրույթներին համապատասխան:

62. ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական հաշվետվության վերստուգման նպատակով աուդիտորական կազմակերպության ընտրություն կատարելիս մրցութային հանձնաժողովը առաջնորդվում է հետևյալ չափանիշներով.

1. աուդիտորական կազմակերպության միջազգային ճանաչումը,
2. առնվազն 10 տարվա աուդիտորական աշխատանքի փորձը,
3. Հայաստանի Հանրապետությունում տվյալ կազմակերպության կողմից աուդիտի անցկացման փորձը,
4. ԱՊՀ և անցումային տնտեսության երկրների կենտրոնական բանկերում աուդիտի անցկացման փորձը,
5. Հայաստանում կամ ԱՊՀ երկրներում ներկայացուցչությունների, մասնաճյուղերի կամ դուստր ձեռնարկությունների առկայությունը,
6. աուդիտի աշխատանքներին մասնակցող աշխատակիցների որակավորման մակարդակը և աշխատանքային փորձը,
7. աուդիտի ընդգրկման բնագավառները,
8. աուդիտի իրականացման և աուդիտորական եզրակացության ներկայացման ժամկետները,
9. աուդիտի իրականացման արժեքը:

63. Մրցութային հանձնաժողովը ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական հաշվետվության վերստուգման նպատակով աուդիտորական կազմակերպության ընտրության համար հրապարակային մրցույթի անցկացման մասին հրապարակային ծանուցումը պետք է իրականացնի մինչև տվյալ տարվա օգոստոսի 15-ը:

64. ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական հաշվետվության վերստուգման նպատակով աուդիտորական կազմակերպության ընտրության համար հրապարակային մրցույթը անցկացվում է սեպտեմբեր ամսվա ընթացքում.

65. ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական հաշվետվության վերստուգման նպատակով աուդիտորական կազմակերպության ընտրության համար հրապարակային մրցույթի արդյունքների ամփոփումը և պայմանագրի ստորագրումը կատարվում է հոկտեմբեր ամսվա ընթացքում: Սույն կետով նախատեսված ժամանակացույցը պարտադիր նշվում է հրապարակային ծանուցման տեքստում:

Գլուխ 14. ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

66. ՀՀ կենտրոնական բանկը պարտավոր է վարել փաստաթղթային գրառումներ (արձանագրել մրցութային հանձնաժողովի նիստերը) և պահպանել հրապարակային մրցույթի հետ կապված փաստաթղթերը (պայմանագրերը, արձանագրությունները և այլն) հրապարակային մրցույթի ավարտից երեք տարվա ընթացքում: Կենտրոնական բանկի նախաձեռնող ստորաբաժանումները իրենց նախաձեռնությամբ անցկացված մրցույթների նյութերի բնօրինակները մրցույթի արդյունքներն ամփոփելուց հետո 15 օրվա ընթացքում

պարտավոր են տրամադրել Կենտրոնական բանկի իրավաբանական վարչությանը: Հրապարակային մրցույթի հետ կապված բոլոր փաստաթղթերը (պայմանագրերը, արձանագրությունները և այլն) հրապարակային մրցույթի ավարտից հետո պահպանվում են ՀՀ կենտրոնական բանկի իրավաբանական վարչությունում, որը պատասխանատու է դրանց պահպանության համար:

66.1 Սույն կանոնակարգի դրույթները չեն գործում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից վարչական և կապիտալ ներդրումների ծախսերի շրջանակներում ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերման դեպքում:

67. Սույն կանոնակարգը ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից: